ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
««ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-319-28.06.2022-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նոր հոդված	Նախագծում սահմանել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. «Հոդված...Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետում «պատվիրման,» բառից հետո լրացնել «լրացման,» բառը:»:	Առաջարկն ընդունվել է: Անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ, ինչպես նաև հատուկ ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների բոլոր դասարանների սովորողներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է	Առաջարկն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է

			համապատասխանաբար տարրական ընդհանուր և հատուկ հանրակրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:»:		
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.՝ «8. Նախադպրոցական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով պետական բյուջեի միջոցներից ստանում են նպատակային ֆինանսավորում՝ Հայաստանի հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:»:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	**Նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի «շարադասությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «երեք» բառը փոխարինել «վեց» բառով:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է